ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

_____ Հայոց լեզվի և գրականության ___
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ __ Բաբուդյան Հ. Ռ.__ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № ___2___

«__12__» ____սեպտեմբեր__ 2023 թ.

ՀԼԳ/բ-031 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-1» ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011301.03.6 Սոցիալական մանկավարժություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **Մանկավարժության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ **__Հայոց լեզվի և գրականության_**
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ **_____առկա_____**
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ առկա **__1-ին կուրս, 1-ին կիսամյակ_____**

Դասախոս(ներ) ՝ **__Շողիկ Ղուկասյան_____**
/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ՝_ shoxerik@mail.ru, shoxerik4@gmail.com

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

Հայոց գրական լեզվի զարգացման նորագույն շրջանի՝ ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրությունը կոչված է օգնելու ուսանողներին առավել ամբողջական դարձնելու հայերենի իմացությունը, խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական և գործնական գիտելիքները, հայոց լեզվի վերաբերյալ, գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, նախապատրաստել ուսանողներին հետագա ինքնուրույն ուսումնասիրությունների:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

2.1. Դասընթացի նպատակն է՝

- մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ապագա կառավարիչին, գիտնական-հետազոտողին և՛ տեսական, և՛ գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով զինելը:

2.2. Դասընթացի խնդիրներն են՝

- Սովորեցնել հայոց լեզվի տեսական հիմքերը:
- Բացատրել ուղղագրական և ուղղախոսական օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել լեզվաբանական հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել հայոց լեզվի առանձնահատկությունները լեզվաբանության համատեքստում:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .**

Բուհում «Հայոց լեզու և գրականություն-1» առարկայի ծրագիրը յուրացնելու համար ուսանողը պետք է ունենա միջնակարգ կրթության «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների պաշար:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[1] և /կամ**

[1] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Երացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին

կոմպետենցիաները.

«Հայոց լեզու և գրականություն-1» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

- գործնական գրություններ (դիմում, զեկուցագիր, տեղեկանք, լիազորագիր) գրելու կանոնների յուրացում,
- ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների, հարադիր բարդությունների ուղղագրության տիրապետում,
- քերականական–ձևաբանական նորմով սահմանված օրինաչափությունների, դրանցից կատարված և կատարվող շեղումների յուրացում,
- թույլատրելի զուգաձևությունների կիրառում ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում,
- ներգործական կառուցվածքի փոխակերպումը կրավորականի, ստորադաս նախադասություններինը՝ դերբայական դարձվածների, ուրիշի ուղղակի խոսքինը՝ անուղղակի խոսքի, խոսքի մասերի փոխանցումների յուրացում:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

<u>ԳԿ1</u> վերլուծելու և սինթեզելու ունակություն,
<u>ԳԿ4</u> մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
<u>ԳԿ9</u> խնդիրների լուծում,
<u>ԳԿ10</u> որոշումների ընդունում:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

<u>ՀԳԿ1</u> գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
<u>ՀԳԿ2</u> հետազոտություններ կատարելու ունակություններ,
<u>ՀԳԿ3</u> սովորելու ունակություն,
<u>ՀԳԿ8</u> ինքնուրույն աշխատելու ունակություն,

<u>Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>

<u>ԱԿ2</u> հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
<u>ԱԿ4</u> ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
<u>ԱԿ6</u> կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
<u>ԱԿ11</u> տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
<u>ԱԿ14</u> տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

համապատասխան:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[2].**

«Հայոց լեզու և գրականություն-1» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, դասընթացը նպաստում է ապագա մասնագետի գրավոր և բանավոր խոսքի մշակմանը, ապագա գիտնական-հետազոտողի՝ գործնական, գիտական ոճերին ծանոթությանը՝ կիրառական հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությամբ:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	2 կրեդիտ/60 ժամ

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	-
Գործնական աշխատանք	28
Սեմինար պարապմունք	-
Լաբորատոր աշխատանք	-
Ինքնուրույն աշխատանք	32
Ընդամենը	60
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ստուգարք

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u> .

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է

[2] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել :

լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[3]՝

  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
  - **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

[3] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[4].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	ինքնուրույն աշխատանք
1.	Հայոց լեզվի զարգացման փուլերը: Հայերենի հնչյունային համակարգը: Ձայնավորներ: Բաղաձայններ և երկհնչյուններ, դրանց ուղղագրությունը:			4		2
2.	Հնչյունափոխություն. տեսակները: Բառագիտություն: Բառի սահմանումը: Բառերի տեսակներն ըստ կազմության: Ձևույթ. տեսակները: Բառակազմ. հիմքեր: Բարդության տեսակները:			4		2
3.	Իմաստաբանություն: Բառերի ձևաիմաստային խմբերը: Իմաստափոխության տեսակները: Բառագործածության սխալներ:			4		2
4.	Հայերենի բառապաշարը: Բառապաշարի համաժամանակյա և տարաժամանակյա դասակարգում: Փոխառություններ:Դարձվածաբանություն և բառարանագրություն:			4		2
5.	Ձևաբանություն. առարկան, խնդիրները, հիմնական հասկացությունները: Քերականական կարգեր, նրանց արտահայտությունը: Խոսքի մասերի դասակարգման հիմունքները:			4		4
6.	Հոլովման և խոնարհման առանձնահատկությունները:			2		4
7.	Խնդրառություն, համաձայնություն և առդրություն:			2		2
8.	Փոխակերպումներ:			2		2
9.	Հայերենի կետադրության առանձնահատկությունները:			2		2
ԸՆԴԱՄԵՆԸ				28		32

[4] Նման է օրացուցային պլանին:

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու	1982
2.	Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. հ.1	1975
3.	Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն	1983
4.	Մ.Ասատրյան, Ժամանակկից հայոց լեզու, Շարահյուսություն	1987
5.	Յ.Դավթյան, Հայոց լեզու, փոխակերպումներ	2005
6.	Ա.Սանթոյան, Արդի հայերենի կետադրության համակարգը	2004
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Քոսյան Վ., Վերդյան Բ., Մարության Ա., Հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ	1989
2.	Վ.Գաբրիելյան, Գրավոր խոսք	2004
3.	Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ	1987
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	www.nayiri.com	
2.	www.eanc.net	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն
1.	Հայոց լեզվի զարգացման փուլերը: Հայերենի հնչյունային համակարգը:	1.Նախագրային հայերեն:		Բանավոր հարցում, 20 հարց	ՊԳ 1,2

	Ձայնավորներ: Բաղաձայններ և երկհնչյուններ, դրանց ուղղագրությունը:	2.Գրավոր հայերենի փուլերը: 3.Ձայնավորների ներդասային հատկանիշները:	4	պարունակող թեստ:	ԼԳ 1,2
2.	Հնչյունափոխություն. տեսակները: Բառագիտություն: Բառի սահմանումը: Բառերի տեսակներն ըստ կազմության: Ձևույթ. տեսակները: Բառակազմ. հիմքեր: Բարդության տեսակները:	1.Դիրքային հնչյունափոխություն: 2.Փոխազդեցական հնչյունափոխություն: 3.Պատմական հնչյունափոխություն:	4	Բանավոր հարցում: 20 հարց պարունակող թեստ:	ՊԳ 1,2 ԼԳ 1,2
3.	Իմաստաբանություն: Բառերի ձևաիմաստային խմբերը: Իմաստափոխության տեսակները: Բառագործածության սխալներ:	1.Բառիմաստի տեսակները: 2.Բառերի ձևաիմաստային տեսակները 3.Իմաստափոխության տեսակները: 4. Բառագործածության սխալներ:	4	Բանավոր հարցման միջոցով, հանձնարարված վարժությունների ստուգում:	ՊԳ 1,2 ԼԳ 1,2
4.	Հայերենի բառապաշարը: Բառապաշարի համաժամանակյա և տարաժամանակյա դասակարգում: Փոխառություններ: Դարձվածաբանություն և բառարանագրություն:	1.Բնիկ հայերեն բառեր: 2.Հին և նոր փոխառություններ: 3.Համագործածական բառեր: 4.Ոչ գործուն շերտին պատկանող բառեր: 5. Փոխառություններ և բնիկ հայերեն բառեր: 6.Հայերենի դարձվածքները: 7.Հայ բառարանագրությանհամարոտ ակնարկ:	4	Բանավոր հարցում և բնագրերից դուրս գրված օրինակների ներկայացում:	ՊԳ 1,2 ԼԳ 1,2
5.	Ձևաբանություն. առարկան, խնդիրները, հիմնական հասկացությունները: Քերականական կարգեր, նրանց արտահայտությունը:	1.Ձևաբանության ուսումնասիրության առարկան: 2.Հայերենի խոսքի մասերը.համառոտ ակնարկ:	4	10 հարց պարունակող թեստ: Թիմային	ՊԳ 1,2 ԼԳ 1,2

	Խոսքի մասերի դասակարգման հիմունքները:			պայքար:	
6.	Հոլովման և խոնարհման առանձնահատկությունները:	1.Գոյականի և դերանվան հոլովումը: 2.Փոխանվանական հոլովում: 3.Հոգնակի թվի կազմության առանձնահատկությունները: 4.Խոնարհման տիպերը: 5.Անկանոն խոնարհում:	2	20 հարց պարունակող թեստ: Թիմային պայքար:	ՊԳ 3 ԼԳ 1,2
7.	Խնդրառություն, համաձայնություն և առդրություն:	1.Շարահյուսական կապակցության եղանակները, 2.խնդրառությունն, 3.համաձայնություն, 4.առդրություն	2	10 հարց պարունակող թեստ:	ՊԳ 4 ԼԳ 1,2
8.	Փոխակերպումներ	1.Բարդ նախադասության փոխակերպումը պարզի, 2. ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակիի:	2	Գործնական վարժություններ	ՊԳ 5
9.	Կետադրության առանձնահատկությունները հայերենում	1.Տրոհության նշանների կիրառությունը, 2.բացահայտության նշանների կիրառությունը, 3.առոգանության նշանների կիրառությունը:	2	Թելադրություն, գործնական վարժություններ	ՊԳ 6 ԼԳ 1,2

12.2. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն
1.	Մեսրոպյան այբուբենի հորինման սկզբունքները, ժամանակաշրջանը, առանձնահատկությունները: Այբուբենի թվային արժեքը:	1.Այբուբենի ստեղծման նախադրյալները, Հունական և ասորական այբուբենների առանձնահատկությունները, Այդ սկզբունքների կիրառությունը հայոց այբուբենում, այբուբենի թվային արժեքը:	Ռեֆերատ	05–11. 10, 02–08. 11	Բանավոր հարցում:	ՊԳ 1,2 ԼԳ 1,2
2.	Բնիկ հայերեն և փոխառյալ բառեր	1Հնդեվրոպական ծագման բառեր, 2.նախագրային շրջանում կատարված փոխատություններ, 3. արաբական և թուրքական փոխառություններ, 4. ռուսերենի լեզվական ազդեցությունները, 5. նորագույն փոխառություններ	Ռեֆերատ	18–19. 10, 15.11	Բանավոր հարցում:	ՊԳ 1,2 ԼԳ 1,2
3.	Անվանական և դերանվանական հոլովում:	1.Անվանական հոլովում, տիպերը, հոլովիչներ և հոլովական վերջավորություններ, 2.Հոլովների թիվը ժամանակակից հայերենի երկու գրական տարբերակներում, 3.դերանվանական հոլովման առանձնահատկությունները:	Ռեֆերատ	19–25. 10, 16–18. 11	Բանավոր հարցում:	ՊԳ 3 ԼԳ 1,2
4.	Հայերենում նախադասության շարահյուսական կառուցվածքը և կետադրությունը	1.Շարահյուսական կապակցության եղանակներն ու միջոցները, 2.պարզ նախադասության կառուցվածքը, 3.բարդ նախադասության կառուցվածքը:	Ռեֆերատ	01. 11, 18. 11	Բանավոր հարցում:	ՊԳ4,6

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	համակարգիչ
Համակարգչային ծրագրեր	MS Office
Այլ	

13. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:

13.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

13.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

13.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1.Հնչյունային ուղղագրության հիմունքները: Պատմական-ավանդական ուղղագրության հիմունքները: Ուղղագրության և ուղղախոսության հաղորդակցական արժեքը:

2. Ուղղագրության կանոնների և տեսակների մեկնաբանություն: Ուղղախոսության կանոնների կիրառություն: Ընթերցանություն: Թելադրություն:

3. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը:

4. Գործնական գրություններ: Գործնական գրությունների կանոնների քննարկում: Դիմում, զեկուցագիր, տեղեկանք, լիազորագիր գրելու կանոնները:

5. Հարադրավոր բարդություններ: Բառերի միասին գծիկով, անջատ գրություն:
6. Տողադարձ: Թեստային աշխատանք:
7. Դարձվածքներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, դրանց գործածությունը խոսքում: Բառերի ձևաիմաստային խմբերի ոճական և հաղորդակցական արժեքը (հոմանիշ, հականիշ, նույնանուն, հարանուն):
8.Խոսքի մասեր: Քերականական–ձևաբանական նորմով սահմանված օրինաչափությունները, դրանցից կատարված և կատարվող շեղումները, թույլատրելի զուգաձևությունները ձևաբանական մակարդակում:
9. Նախադասության անդամների կետադրությունը: Ներգործական կառուցվածքի փոխակերպումը կրավորականի:
10. Բարդ նախադասությունների և դերբայական դարձվածի կետադրությունը: Ստորադաս նախադասությունների փոխակերպումը դերբայական դարձվածների:
11. Ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը և փոխակերպումը անուղղակի խոսքի: Թեմա
12. Խնդրառության և կապերի հոլովառության դերը բանավոր և գրավոր խոսքում:
13. Համաձայնության դերը բանավոր և գրավոր խոսքում:
14. Նախադասության հարակից միավորներ:

(1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի ---9-10-րդ----շաբաթվա ընթացքում)
ընթացիկ ստուգման տարբերակի նմուշ

1. Լրացնել բաց թողած տառերը: (4 միավոր)

Հար_ել, մանրազ_ին, գո_գո_ալ, խ_կվել, կարկա_ել, խր_վիլակ, տր_ակ, համբ_ _ր:

2. Տողադարձել տրված բառերը բոլոր հնարավոր ձևերով: (4 միավոր)

Ճռճռան, կիսաշրջան, բազմամյա, խռմփացնել, հարևան, երկյուղալի, հոբելյան, հիմնահատակ:

3. Վանկատել տրված բառերը, նշել վանկերի տեսակները: (4 միավոր)

Խխունջ, զգույշ, մտադրվել, շրխկացնել, արկածախնդիր, մառախուղ, անվնաս, գլխապտույտ:

4. Գրել մեծատառերը: (4 միավոր)

կարսի թագավորություն, արա գեղեցիկ, արարատյան դաշտ, սան ֆրանցիսկո, վայոց ձորի մարզ, սուրբ նշան եկեղեցի, հայաստանի կոմունիստական կուսակցություն, լեոնարդո դա վինչի

5. Առանձնացնել բաղադրիչները, նշել բարդության տեսակը: (4 միավոր)

Անասուն, արդյունաբերություն, մեղվաբուծական, դժվարամարս, զվարճախոս, երթևեկություն, թեթևամիտ, ժառանգորդ:

(2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի----19-20-րդ---շաբաթվա ընթացքում)
ընթացիկ ստուգման տարբերակի նմուշ

1. Առանձնացնել շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները: (3 միավոր)

Եթե, երևի, օխա՜յ, քանզի, մինչև, անկասկած, նախքան, հե՜յ, անշուշտ, թեպետ:

2. Առանձնացնել ներգործական, կրավորական և չեզոք սեռերի բայերը: (3 միավոր)

Անդրադառնալ, ջարդել, կառուցվել, սանրվել, կայանալ, խնդրել, աղմկել, գրվել, կառուցապատել, համբուրել:

3. Որոշել տրված բայերի երկրորդ հիմքը, նշել տեսակը: (4 միավոր)

Անհանգստանում է, վերցնելու եմ, կթողնի, չի մատուցի, փախավ, մի՛ կարդացրու, պիտի տարբերվի, չի բարձրանա, կհագնի, առանձնացնում է:

4. Որոշել տրված բայերի կազմությունը, նշել ածանցի տեսակը: (3 միավոր)

Չի խոչընդոտի, հանգստացավ, կվախեցնի, ալյուրոտեց, ընկել է, կկոտրտի, գրվելու է, հաստատեց, կանցնի, ուշանում ես:

5. Նշել դերբայը կամ ժամանակաձևը: (3 միավոր)

Շրջում էի, թռչկոտելու, չի հանգչի, մոլորվի, բարձրացավ, չեմ մոտենա, մի՛ որոշի, վախեցող, գերազանցես, չեմ փոխարինի:

6. Դուրս գրել բառակապակցությունները, որոշել տեսակը (խնդրառություն, առդրություն, համաձայնություն): (4 միավոր)

Հասարթյանը կնոջից ոչ մի տեղեկություն չէր ստացել և խիստ անհանգստացել էր:

14.3. Գնահատման չափանիշները.

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով:
- Գործնական աշխատանքները՝ նվազագույնը երկու ստուգում՝ 20-ական միավոր գնահատմամբ:
- Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011301.03.6 Սոցիալական մանկավարժություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՀԼԳ/բ-031 «Հայոց լեզու և գրականություն-1»**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի,1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	28	Գործնական աշխատանք	28
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին և՝ տեսական, և՝ գործնական-կիրառական կարողությունների և հմտություններով զինելը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* - Հայոց լեզվի կառուցվածքային օրինաչափությունները, ժամանակակից հայերենի ուղղագրության և ուղղախոսության նորմերը, ապագա մասնագիտության հիմնական հասկացություններն ու դրույթները: *Հմտություն* - Ցույց տալ լեզվի կառուցվածքային միավորները և արժևորել դրանք որպես խոսքի կառուցման բաղադրիչներ, կարողանա հայերենի և օտար լեզուների զուգադրությամբ հիմնավորել քերականական իմաստների արտահայտման ընդհանրություններն ու տարբերությունները, շարադրել իր միտքը գրագետ բանավոր և գրավոր հայերենով: *Կարողունակություն* - Հասարակական ելույթների, երկխոսությունների, մանկավարժական հետազոտությունների հնարներ: Ընթերցածը բանավոր վերարտադրելու և գրավոր շարադրելու հնարներ:			
Դասընթացի բովանդակությունը	*Թեմա 1.* Հնչյունային ուղղագրության հիմունքները: Պատմական-ավանդական ուղղագրության հիմունքները: Ուղղագրության և ուղղախոսության հաղորդակցական արժեքը: *Թեմա 2.* Ուղղագրության կանոնների և տեսակների մեկնաբանություն: Ուղղախոսության կանոնների կիրառություն: Ընթերցանություն: Թելադրություն:			

	Թեմա 3. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը: *Թեմա 4.* Գործնական գրություններ: Գործնական գրությունների կանոնների քննարկում: Դիմում, զեկուցագիր, տեղեկանք, լիազորագիր գրելու կանոնները: *Թեմա 5.* Հարադրավոր բարդություններ: Բառերի միասին գծիկով, անջատ գրություն: *Թեմա 6.* Տողադարձ: Թեստային աշխատանք: *Թեմա 7.* Դարձվածքներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, դրանց գործածությունը խոսքում: Բառերի ձևաիմաստային խմբերի ոճական և հաղորդակցական արժեքը (հոմանիշ, հականիշ, նույնանաուն, հարանուն): *Թեմա 8.* Խոսքի մասեր: Քերականական – ձևաբանական նորմով սահմանված օրինաչափությունները, դրանցից կատարված և կատարվող շեղումները, թույլատրելի զուգաձևությունները ձևաբանական մակարդակում: *Թեմա 9.* Նախադասության անդամների կետադրությունը: Ներգործական կառուցվածքի փոխակերպումը կրավորականի: *Թեմա 10.* Բարդ նախադասությունների և դերբայական դարձվածի կետադրությունը: Ստորադաս նախադասությունների փոխակերպումը դերբայական դարձվածների: *Թեմա 11.* Ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը և փոխակերպումը անուղղակի խոսքի: *Թեմա 12.* Խնդրառության և կապերի հոլովառության դերը բանավոր և գրավոր խոսքում: *Թեմա 13.* Համաձայնության դերը բանավոր և գրավոր խոսքում: *Թեմա 14.* Նախադասության հարակից միավորներ
Գնահատման մեթոդները և չափանիշները	▪ Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով: ▪ Գործնական աշխատանքները՝ նվազագույնը երկու ստուգում՝ 20-ական միավոր գնահատմամբ: ▪ Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
Գրականություն	Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու. հ.1 Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն Մ.Ասատրյան, Ժամանակկից հայոց լեզու, Շարահյուսություն Յ.Դավթյան, Հայոց լեզու, փոխակերպումներ Ա.Սանթոյան, Արդի հայերենի կետադրության համակարգը